Արձանագրություն N 1

ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/26 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«Շինարարական ապրանքներ»

ք. Երևան 18 հունիս 2026թ

ժամը 14:00

Մասնակցում էին՝
նախագահ՝ Գևորգ Հարությունյան
անդամներ՝ Դավիթ Պողոսյան
Անահիտ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

1. Էլեկտրոնային աճուրդով հրավերի տեսքը, պայմանագրի նախագիծը հաստատելու մասին (կցվում են)

(Գ. Հարությունյան)

Հաստատել էլեկտրոնային աճուրդով հրավերի տեքստը և պայմանագրի նախագիծը (կցվում են)

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Հարությունյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հակադարձ աճուրդի ավարտին հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, ք. Երևան, Տերյան 105, 3211 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ Գևորգ Հարությունյան

Անդամներ Դավիթ Պողոսյան

Անահիտ Կարապետյան

Քարտուղար Լուսինե Ավետիսյան

Արձանագրություն N 2

ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/26 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«Շինարարական ապրանքներ»

ք. Երևան

01 հուլիս 2026թ
ժամը 10:00

Մասնակցում էին՝
նախագահ՝ Գևորգ Հարությունյան
անդամներ՝ Դավիթ Պողոսյան
Անահիտ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

1. **ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/26 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին**

(Գ. Հարությունյան)

1.1 ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/26 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

N	Մասնակիցների անվանումները	Կոնտակտային տվյալները
1	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ	Email՝ h5r.gasparyan@yandex.com Հեռախոս՝ 077699551 Հ.Վ.Հ.Հ.՝ 01096027 Հաշվեհամար՝ 1570067388333800
2	ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ	Email Հեռախոս՝ 041464444 Հ.Վ.Հ.Հ.՝ 47874685 Հաշվեհամար՝ 220123541868000

1.2 Աճուրդի ավարտին ձևավորվել են հետևյալ գները՝

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանում	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
						Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ	44411100	Շինարարական նյութեր	10,995,700	9,163,083	20%	10,995,699	
1	2	ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ			10,995,700	777,777,777	0%	777,777,777	Մերժված

2. Ընթացակարգի հայտի գնահատման մասին

(Գ. Հարությունյան)

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ի, որի հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հավելվածը (հավելված 1.3):

2.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին, բացառությամբ՝

«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ի

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (հավելված 1) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
- դիմումին կից չի ներկայացրել հավելված 1.2-ը (ներկայացված ապրանքացանկի մեկ միավորի գները, ֆիրմային անվանումները և տեխնիկական բնութագրերը)

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովն որոշեց՝

1) Հիմք ընդունելով ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/26 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետը մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված թերությունները.

«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ին

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (հավելված 1) հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ
- Ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հավելվածը (հավելված 1.3):
- Հրավերով սահմանված կարգով ներկայացնել հավելված 1.2-ը

2) Նիստը վերսկսել շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին (ք. Երևան, Տերյան 105, 3211 սենյակ հասցեում):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ Գևորգ Հարությունյան

Անդամներ Դավիթ Պողոսյան

Անահիտ Կարապետյան

Քարտուղար Լուսինե Ավետիսյան